6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4-րդ և 9.5-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվոր կողմից նախապես կատարվել է 30.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարում, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ 25.03.2024 թվականին կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ–2024ՀԴՁ–1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը (ծանուցումը) անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 10.12.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am